ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

✉ Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզ, Շիրակամուտ համայնք

☎ 0255 6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

„10" դեկտեմբերի 2019թվականի N63 -Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման , 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի «բ)» ենթակետով և 22.1 կետի պահանջներով և „Նորմատիվ իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

Որոշում եմ.

1. Օրինականացնել Ստեփան Ռաֆիկի Պապոյանին, Սուսան Աղասիի Պապոյանին և Էդմոն Ստեփանի Պապոյանին պատկանող Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի 23-րդ փողոցի 18-րդ հասցեի բնակելի կառուցապատման հողամասում (կադաստրային համար՝ 06-087-0068-0004)՝

1) 1985 թվականին ինքնակամ կառուցած բնակելի տունը 131,75քմ, նկուղ՝ 36,71քմ, աստիճանահարթակը՝ 5,08քմ, ծածկարանը՝ 19,48քմ, հավանոցը՝ 4,05քմ, անասնագոմը՝ 18,82քմ, ծածկարանը՝ 16,38քմ, մառանը՝ 46,5քմ, և ավտոտնակը 18,48քմ մակերեսներով,

2) 2005 թվականին ինքնակամ կառուցած անասնագոմը՝ 5,76քմ մակերեսներով:

2. Սույն որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաշվի առնելով, որ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:

4. Հաշվի առնելով, որ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված 5,76 քմ ընդհանուր մակերեսներով ինքնակամ շինությունը կառուցվել է 2001 թվականի մայիսի 15-ից հետո, օրինականացման համար Շիրակամուտի համայնքապետարանի 900245168126 հաշվեհամարին վճարել 3300 (երեք հազար երեք հարյուր) դրամ:

5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Ուժը կորցրած ճանաչել Շիրակամուտ համայնքի ղեկավարի 13.05.2019թ. „ Ինքնակամ կառուցված շինություններ մասին„ թիվ 38-Ա որոշումը

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԵՐԱՆՈՍՅԱՆ